

բարեհաճեց զիսել քաղաքը մծախոյ ամբու-
թիւններէ մէկէ վրայից, ճանապարհին զիմա-
ւորեց Նորին Վեհափառութեան եկեղեցական
թափորով հայկաթոյի չորեքականութիւնը
և առաջնորդեց զէպի եկեղեցիս ուր քահա-
նանքից մինը ուղերձ կարգաց' ողջունելով
Հայոց Հովուապետի մուտքը Կարս: Վեհափառ
Հայրապետը Հայրիկեան լեզուով խօսեց եղբայր-
սիրութեան և ընկերսիրութեան մասին՝ յի-
շեցնելով Պեշիկթաշիանի խօսքերը: Ընդ աս-
ախդք զի նշ կայ սիրունս քան զանձկալի եղբայր
անունս: յորդոր կարգաց բոլոր հայերին իրեւ
եղբայրներ սիրել իրար, ապա մասնացոյց լի-
նելով սեզանի վրայ բազմեցրած Սեդրեարուսի և
Պրիզոր Լուսաւորչի զբկաստնութեան պատ-
կերի վրայ՝ աւելացրեց. Ես այն մոլոսանդ կրօ-
նաւորներէց չեմս որոնք կրօնական անհամբերո-
ղութեամբ ատում են ուրիշ կրօն դաւանողնե-
րին, ինձ համար բաւական է, եթէ ճշմարտ
քրիստոնէսաց է— սիրող ընկերին, եղբորը, բա-
րեկամին, մենք բոլորս իրեւ Հայկի զաւակներ՝
եղբայրներ ենք, և մեր շահերը ընդհանուր են: Ես
կապ օրհնելով ներկայ եղող երկսեռ ունկըն-
դիրներին, շարունակեց իւր ճանապարհը: Զրօ-
տանքից վերապառնալիս այցելեց թիւրքաց և
պարսից մկիթները, երբ միտարէի գլխից տե-
տաւ երգիչը Վեհափառի կառքի մծախալը
պարսից մկիթին, բարձր և քաղցր ձայնով
սկսեց իր աղօթքը, իսկ մկիթ մտնելիս՝ բարի
գալուստ երգեց մի ուրիշ պարսիկ շատ սրտա-
ուռէ եղանակով: Մկիթը ներսից զարդարուած
էր թանկագին գորգերով և կերպաներով:
Այստեղ Վեհափառ Հայրապետը տեղեկութիւն
ստացաւ պարսիկների թուի և նիւթական դու-
թեան մասին, օրհնեց ամենքին և ուղեորուեց
զէպի յունաց եկեղեցին, իսկ այնտեղից՝ իր
օթեանը:

Կէսօրից յետոյ անկարող լինելով մաւ-մաւ
ընդունել ամենքին՝ Վեհափառը դուրս եկաւ
պատշգամբս խօսեց ներկայ եղողներէ հետ, ցաւ
յայտնեց, որ Կարսը իրան համապատասխան
եկեղեցի չունի, որտեղ կարելի լինէր խօսել, և
յոյս առաւ, որ միւս անգամ գալիս կ'ստի
իրանց հետ նոր կառուցուած ընդարձակ եկե-
ղեցում:

Ապրելի 16-ին երկաթուղով Վեհափառը

մեկնեց քաղաքից զէպի Աղեքսանդրապոլ, քաղ-
ցրը և անմոռանալի յիշողութիւն թողնելով
ամենքի սրտում: Վեհափառ Հայրապետի Կարս
մանելը յաւերժացնելու համար եղբ. Բաղդա-
սարեանները նուիրեցին 240 ք. ա. տարածու-
թեամբ մի դեպին հայոց նոր եկեղեցի շինելու
համար: Կարսը երեք օր շարունակ տնտիկան
կերպարանք ունէր:

Ապրելի 17-ին մնալով Աղեքսանդրապո-
լում՝ Վեհափառ Հայրապետը մեկնեց Սանահին
վանքը, վանքը վերանորոգելու մասին կարգա-
դրութիւններ անելու, սակայն ճարտարապետ-
ները խորհուրդ էին առել նախ երկաթու-
ղուց զէպի վանք տանող ճանապարհը շինել,
ապա ձեռնարկել վանքի վերանորոգութեան
գործին: Որպէսզի հետաւոր լինի վերանորո-
գութեան համար հարկաւոր նիւթերը հեշ-
տութեամբ տեղափոխել:

Մի քանի օր Սանահնում մնալուց յետոյ
Վեհափառ Հայրապետը բարեհաճեց վերա-
դառնալ ս. Եջմիածին Դիլիջանի վրայով: Դանա-
պարհին հանգստանալով Սեանայ վանքում
Մայիսի 1-ին Նորին ս. Ռժութիւնը ողջամբ
Ժամանեց Մայր Աթոռ:

Իգդիր, Կողր, Կաղզուան և Կարս ուր
Նորին Սրբութիւնը առաջին անգամն էր այցե-
լում և ուր նախկին կաթողիկոսներից երկար
Ժամանակ ոչ ոք չէր գնացել, մեծ տպաւորու-
թիւն գործեցին Հայրիկի քարոզներն ու վրոյց-
ները, և այդ տեղերում անջնջիլ յիշատակ
մնաց ժողովրդի սրտի մէջ:

ՌԻՎԵՏԻՈՐՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԽՈՐ ՎԻՐԱՊ.

Ազգիս Վեհափառ Հայրապետը Ս. Գրի-
գոր Լուսաւորչի - Եւնի ի վերապէս տօնը Խորվի-
րապում կատարել ցանկանալով՝ հաճեցաւ մա-
յիսի 30-ին, չորեքշաբթի օրը, ծաղից յետոյ Ժա-
մբ 4-ին, Ս. Եջմիածնից ճանապարհընկնել զէպի
Երեան: Նորին Սրբութեանը ուղեկցում էին
Արթ. Տ. Յուսիկ և Տ. Կորիւն վարդապետները:
Երեանից մինչև այդեւտանը զիմաւորելու էր
եկել Դեր. Սուքիաս Արքեպիսկոպոսը մի խումբ
քահանաների հետ: Այդ զիշեր Երեանի ա-
ռաջնորդարանում մնալով՝ յաջորդ օրը ճա-

շից յետոյ Վեհափառ Հայրապետը ճանապարհը շարունակեց: Ուղեկցողների վրայ աւելացան զանազան զիւղերից եկած ձիաւոր քահանաներ, ձեմարանի սաներից մի խումբս որ Վեհ Տիրոջ պատուէրի համաձայն Խորվիրապում պատարագին պիտի երգէր: Տ. Սուքիաս արագանը երեւանից ուղեկցեց Ս. Հայրապետին մինչև Հայոց նոր գերեզմանատան տեղը քաղաքից 1¹/₂ վերստ հեռու, և ցոյց տուց այն տեղը, ապա վեհի օրհնութիւնն ստանալով վերադարձաւ երեւան:

Ճանապարհի վրայ գտնուող բոլոր գիւղերի բնակիչները մեծ ոգևորութեամբ աղօթեցան զիմաւորում էին Նորին Արքութեան և օրհնութիւնը ստանալով:

Երեւանից 27 վերստ հեռու գտնուող Ղաւարլու գիւղում՝ Նորին Արքութիւնը 1¹/₂ ժամ հանգիստ առաւ Բարեկրօն Տ. Վարդան քահանայի տանը և թէյ վայելեց. նոյն երեկոյ ժամի 7-ին հասաւ Խորվիրապ, ուր ընդառաջ էր եկել վանահայր Բարձր. Տ. Անտոն վարդապետը չքակայ զիւղերի քահանաների հետ: Է. Անտոնը ոչ մի ջանք չէր խնայել լաւ հիւրասիրութիւն ցոյց տալու Հոգեւոր Տիրոջը:

Աւրաթ օրը ու. Գ. Լուսաւորչի տօնի և յափապէս Նորին Վեհափառութեան գալը: տեան առթիւ չքակայ զիւղերից հաւաքուեցաւ ուխտաւորների մեծ բազմութիւն: Երեկոյեան նախատօնակից յետոյ Վեհը վանքի բակում համառօտ խօսքով յորդորեց ուխտաւորներին ըստ արժանոյն ուխտ կատարել, քրիստոնեայայել հանդարտութեամբ, առանց սովորական դարձած արբեցողութիւնների և դրանց հետեւող աղմուկների ու կռիւների:

Շաբաթ օրը պատարագիչ էր Տ. Յուսէփ վարդապետը. ձեմարանի սաների խումբը երգում էր. Նորին Արքութիւնը ներկայ էր մինչև պատարագի վերջը:

Այդ երեկոյ Վեհափառը եկեղեցի իջաւ հանդիսաւոր թափօրով, ինչպէս որ սովորական է առէն տարի Ս. Էջմիածնի տօնի առթիւ. (երգիչների խումբը երգում էր «Հրաշափառ Աստուած, շարական»): Ժամատացութիւնը կատարուեցաւ բացօդեայ, վանքի բակում: Թէ նախորդ և թէ այս երեկոյ Վեհի պա-

տահանի տակ երգեցիկ խումբը երկար ժամանակ երգում էր:

Կիրակի օրը Ս. Էջմիածնի տօնին պատարագիչ էր Տ. Կորիւն վարդապետը: Պատարագից յետոյ Ս. Հայրապետը ձի նստաւ և բազմաթիւ ուղեկցողների հետ իջաւ Երասխ գետի ափը: Երանայր Տ. Անտոն վարդապետը մի պատէ շինել ջրի հոսանքը դէպի վանքի հողերը արգելելու համար. այդպիսի հեղեղումները մեծ վնաս էին հասցնում, որի առաջն առել է զորանով հայր սուրբը:

Վեհափառ Հայրապետը այդ օրը, ծաշից յետոյ, ձիով ուղեւորուեցաւ դէպի Արտաշատ, որտեղից պիտի գնար Գեղարդ, տանելով իւր հետ միայն հեաւորդներին. իսկ ձեմարանի սաները դարձան Ս. Էջմիածնի: Մօտակայ Գեղարքու գիւղումը նոր եկեղեցին տնտեսելու համար բարեհաճեց ուղղակի այդ գիւղը գնալ և երկու ժամի չափ հանգիստ տանել: Ապա գնաց և տեսաւ նոր եկեղեցին, որի շինութիւնը դեռ շարունակուում է, և օրհնելով ու քաջալերելով շինող ժողովրդեան, մեկնեց դէպի Արտաշատ գիւղը: Հորիւրից աւելի ձիաւոր ուղեկցաց բազմութեամբ, ճանապարհին պատահած զիւղերի ժողովուրդը ընդառաջ էր գալիս Նորին Արքութեան կանաչ ոստերով և ծաղիկ փնջերով, կեցցիներին վերջ զկար և բազմութիւնը հետհետէ ստուարանում էր: Մինչև Արտաշատ գիւղը հասնելն այլ ևս հնար չըկար ժողովրդի յորձանքից ճանապարհն ազատ շարունակելու: Նորին Արքութիւնը բարեհաճեց նախ քան զիւղ մանելն այցելել Արտաշատի բլուրը, և ապա մտաւ գիւղը և այնտեղ էլ գիշերեց: Առաւօտեան երկուշաբթի յունիս 4-ին ժամ 8-ին դուրս եկաւ և ճանապարհ ընկաւ դէպի Գեղարդ, անցնելով Գառնուայ սահմանից, մտաւ Աղատ գետի հովիտը և կէսօրուայ ճաշն արաւ լոբջարնակ «ճանաթիւ» գիւղում, այնտեղ եկան և հոտան Բաշ Գառնի գիւղի ձիաւորներն իրենց տանուաւրի առաջնորդութեամբ, որոնց ուղեկցութեամբ Վեհը ժամը 3-ին հասաւ Բաշ Գառնի, ուր տեղ զիմաւորեց համայնքը աղ ու հացով և խաչ ու խաչվառով: Գիշերելով այնտեղ Նորին Արքութիւնը միւս առաւօտ մեկնեց դէպի Գեղարդայ վանք, ուր մնաց երեք օր և դիտեց վանքը արօտա-

տեղեր, սահմաններ, լեռներ և վանքի լիճք-
ամանի ծ-ին, Ողջաբերդի վրայով, հասաւ Երեւան
և Զ-ին վերադարձաւ Մ. Աթոռ:

Ողջաբերդ գիւղում Վեհափառ Հիւր-
ընկալուեց գիւղի կալուածատէր պ. Վորդա-
նեանցի ամուրսնոցում որտեղ և ցերեկի ձաշն
արաւ: Նոյնպէս և Նորքում իջաւ ծխաւոր
Տ. Յակոբ քահանայի տան և թէյ վայելեց,
ընդունելով տեղւոյն առաջաւորաց այցելու-
իւնները: Այտեղ ընդառաջ էր եկեր Գեր.
Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսը և բերել էր կաթ,
և Նորին Արքութիւնն իջնելով ձիուց, կառքով
մտաւ Երեւան, իշխանութեան և ժողովրդի
ներկայացուցիչների ուղեկցութեամբ:

* * *

Նորին Վեհափառութիւնը Խոր-Վիրապի
և ս. Գեղարդի վանքերին արած այցելութիւնից
և Մ. Աթոռում կարեւոր դործերին ընթացք
տալոյց յետոյ, շողերի պատճառով, հա-
ճեցաւ Բիւրականում և Սշականում մի քանի
օր հանդիստ առնել և ապա Յունիսի 15-ին
նորից վերադարձաւ Մ. Աթոռ, ուր վարչական
հաստատութիւնների ամառուայ գործերի
վերաբերեալ կարեւոր հրահանգութիւն-
ները տալով, Յունիսի 18-ին մեկնեցաւ Բջնու
վրայով դէպի Սեան, Սանահին և Հաղարծին:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապե-
տի բարեհաճ տնօրէնութեամբ այս ան-
գամ՝ եպիսկոպոսական կոչումն ընդունե-
լու համար ընտրուեցան Մայր Աթոռի միա-
բաններէց՝ Բարձրապատիւ Հ. Հ. Բարդու-
ղիմէոս վարդապետ Կեդրեան Վարդապատ-
ցի, Վեռնդ վարդապետ Յովսիփեան Վա-
րդապատցի, Յուսիկ վարդապետ Մոսիս-
եան Վարդապետ, Գարեգին վարդապետ Սա-
թուհեան Աշտարակցի, և Սեանայ վանքի վա-
նահայր Հ. Սարգիս վարդապետ Փիլոյիան
Նոր-Բայալիոցի: Զեռնադրութիւնից մի օր
առաջ՝ Մայիսի 12-ին, Հոգեւոր Տիրոջ հրամա-
նաւ վեհարան հրաւիրուեցան սինոդական
հարք և ընծայացող վարդապետները, որոնց
Վեհք յայանելով իւր որոշումը, պատուիրեց

սինոդականներին Հայաստանայց եկեղեցու
նուիրական կարգի համաձայն առաջնորդի
ընծայացուններին Մայր Տաճար և Մխածնի
իջման ս. սեղանի առաջ երդումն ունի: Բն-
ծայացունները եկեղեցական զգեստով ծունկ
չորած Տիրոջ սեղանի առաջ, Խաչով և Աւե-
տարանով երդուեցան հաւատարիմ մնալ Հա-
յաստանայց ս. եկեղեցու դաւանութեան,
Ամենայն Հայոց Հայրապետութեան Մայր Աթո-
ռին և Նորա Գահակալին: Ապա ընծայացու-
ները Վեհարանում ներկայանալով Հոգեւոր
Տիրոջ, օրհնութիւն ստացան և ունկնդիր
եղան իրենց ապագայ սաշտօնի և հովուական
կոչման նկատմամբ Վեհի խօսած սրտառու
խրատին և հայրական յորդորներին:

Հետեւեալ օրը, Մայիսի 13-ին, Մայր տա-
ճարում վեհափառ Հայրապետ մեծ հանդի-
սով կատարեց ձեռնադրութեան և օծման ս.
կարգը: Երեւանից և շրջակայքից հաւաքուել
էր ժողովրդի մեծ բազմութիւն:

Նորընծայ սրբազան եպիսկոպոսներէից ա-
ռաջին շորսը մանկութիւնից սնուել են Մայր
Աթոռի հովանու ներքոյ և կրթուել Ս. Էջ-
միածնի ժառանգաւորաց դպրոցում: 1876
թուին վարդապետական կոչումն ստանալով,
շորս օծակիցները այնուհետեւ մինչև այսօր
վարել են բազմաթիւ կարեւոր պաշտօններ՝
ոմանք վիճակներում նուիրուելով ժողովրդի
հովուութեան և եկեղեցական վարչական գոր-
ծերի, և ոմանք Մայր Աթոռի ներքին վարչա-
կան, կալուածական, անտեսական և կրթական
գործերին, և քննելով միշտ իրրեւ Մայր Աթո-
ռի զրկում մեծացած հարազատ դաւաններ,
արի և եռանդուն իրենց Հոգեւոր կոչման և պար-
տուց մէջ, արժանացան Նորին Վեհափառու-
թեան բարձր շնորհքին: Տ. Սարգիս եպիսկոպոս
Փիլոյիանը համեմատաբար ուշ ժամանակում է
հոգեւոր կոչումն ընդունել: Հայոց եկեղեցա-
կան ծխական դպրոցներում երկար ժամանակ
արդիւնաւոր ուսուցչութիւն անելուց յետոյ,
1896 թ. ընդունուեցաւ Սեանի միաբանու-
թեան մէջ և վարդապետական կոչումն ստա-
նալով, միաբանութեան կողմից վանահայր ըն-
տրուեցաւ, և այդ պաշտօնը վարելով մինչև
այսօր՝ Սեանի ներքին և արտաքին բարգա-
ւաճման սկիզբը դրաւ: